ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

10-ը նոյեմբերի 2023թ.

Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի շնորհավորական ուղերձը ՏԻՄ օրվա կապակցությամբ

Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի՛ ներկայացուցիչներ, գործընկերներ և ավագանու անդամներ.

Նոյեմբերի տասին մեր երկրում նշվում է տեղական ինքնակառավարման օրը, որի կապակցությամբ շնորհավորում եմ բոլորիս: Տարեցտարի բարեփոխվող տեղական ինքնակառավարումը արդյունավետ համակարգ է, որը հնարավորություն է տալիս բնակիչների ակտիվ ներգրավվածությամբ անմիջականորեն նկատել համայնքում առկա, տարիներ շարունակ կուտակված խնդիրներն ու արագ լուծումներ տալ դրանց:

ՏԻՄ-երի աշխատանքում առանցքային պետք է լինի քաղաքացիների խնդիրներին պատշաճ արձագանքելն ու բնակավայրերի համաչափ զարգացումն ապահովելը: Հենց այս սկզբունքով, բնակիչ-համայնք և համայնք-պետություն ակտիվ համագործակցությամբ Աբովյանի համայնքապետարանը շարունակում է համայնքի բարեկարգմանն ուղղված մասշտաբային աշխատանքները:

Առանձնահատուկ շնորհավորում եմ տեղական ինքնակառավարման գործում անմիջականորեն մասնակցող, սրտացավ քաղաքացիներին և ակտիվ կազմակերպություններին. համատեղ ուժերով մենք պետք է աշխատենք էլ ավելի հարմարավետ ու գեղեցիկ Աբովյան ունենալու համար:

Հարգելի՛ գործընկերներ, ՏԻՄ-երի ներկայացուցիչներ.

ՈՒժեղ և մրցունակ երկիր ունենալու համար, յուրաքանչյուրս տեղում պիտի կառուցենք բարեկեցիկ և զարգացող համայնքներ: Մասնագիտական օրվա առթիվ բոլորիդ մաղթում եմ առաջընթաց ձեզ վստահված պատասխանատու գործում և հաջողություններ անձնական կյանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ